ՀԱՅԱՍՏԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ՏՆՏԵՍԱԳԻՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ

ՄԱՍՆԱԳԻՏԱՑՈՒՄ • ՓՈՐՁ • ՀՆԱՐԱՎՈՐՈՒԹՅՈՒՆ

ԱՐԺԵԹՂԹԵՐԻ ՇՈՒԿԱՅԻ ՎԵՐԼՈՒԾՈՒԹՅՈՒՆ ԵՒ ԿԱՌԱՎԱՐՈՒՄ

Արժեթղթերի շուկայի վերլուծություն և կառավարում կրթական ծրագիրը կազմվել է ՀՊՏՀ և ՀՀ ԿԲ փորձագիտական խմբերի համատեղ աշխատանքի շնորհիվ: Այս առումով կրթական ծրագրի վերջնարդյունքները, դասավանդվող առարկաները և դրանց կրթական ծրագրերը կառուցված են միջազգային առաջատար փորձի, հայրենական շուկայի պահանջների և ոլորտի զարգացման արդի միտումներին համապատասխան: Ուսումնառության ընթացքում կիրառվող մեթոդները, գիտելիքի գնահատման մեխանիզմները նպաստում են կրթական ծրագրի հիմնական վերջնարդյունքների ձեռքբերմանը: Կրթական ծրագրի շնորհիվ մագիստրոսները ձեռք են բերում համապատասխան գիտելիքներ, կարողություններ ու հմտություններ, որոնք նպաստում են ֆինանսական շուկայում մրցունակ պրակտիկ մասնագետ և հետազոտող լինելուն:

Ծրագրի տևողությունը

1.5 տարի

Դասապրոցեսը

շաբաթական 3 անգամ
ժամը 18.20-ից

Ուսման վճարը (տարեկան)

700.000 ՀՀ դրամ

Որակավորում

տնտեսագիտության մագիստրոս

ԱՌԱՐԿԱՅԱՑԱՆԿ

առաջին կիսամյակ

Մոդուլ 1 (7 կրեդիտ)
1. Ֆինանսական մաթեմատիկա
2.Ֆինանսական ենթակառուցվածքներ և ծառայություններ

Մոդուլ 2 (8 կրեդիտ)
1.Ռիսկերի վերլուծություն և կառավարում
ընտրովի առարկաներ
2.Ֆինանսկանա էկոնոմետրիկա և կանխատեսումներ
3.Տվյալների վերլուծություն և մոդելավորում VBA/Excel ֆինանսների համար

Մոդուլ 3 (7 կրեդիտ)
1.Կայուն եկամտաբերությամբ գործիքներ
2.Կիրառական մակրոէկոնոմիկա

Մոդուլ 4 (8 կրեդիտ)
1.Ֆինանսական շուկաների կարգավորում
ընտրովի առարկաներ
2.Կազմակերպությունների ֆինանսական վերլուծություն
3.Հաշվապահական հաշվառումը ֆինանսական ինստիտուտներում

երկրորդ կիսամյակ

Մոդուլ 5 (7 կրեդիտ)
1.Բիզնես անգլերեն և հաղորդակցության հմտություններ
2.Ներդրումային գնահատում

Մոդուլ 6 (7 կրեդիտ)
1.Python ֆինանսների համար
2.Ֆինանսական ածանցյալներ

Մոդուլ 7 (8 կրեդիտ)
1.Վարքագծային ֆինանսներ
2.Արժեթղթավորում և ֆինանսական ինժեներինգ

Մոդուլ 8 (8 կրեդիտ)
1.Ներդրումային փաթեթի կառավարում
2.Տեխնիկական վերլուծություն և առևտուր ֆինանսական շուկաներում

երրորդ կիսամյակ

Մոդուլ 9 (6 կրեդիտ)
1.Գիտահետազոտական մեթոդաբանություն
2.Ֆինանսական միկրոկառուցվածք

Մոդուլ 10 (4 կրեդիտ),
ընտրովի առարկաներ
1.Որոշումների կայացումը քաղաքականությունում
2.CFA ծրագրի նախապատրաստումը
3.Միաձուլումներ և կլանումներ

Մոդուլ 11 (6 կրեդիտ)
Գիտահետազոտական փորձառություն

Մոդուլ 12 (14 կրեդիտ)
Մագիստրոսական թեզ

ԴԱՍԱԽՈՍԱԿԱՆ ԿԱԶՄ

Լևոն Վլադիմիրի Բարխուդարյան

Կրթական ծրագրի ղեկավար

LinkedIn հարթակում անձնական էջի **հղումը**

տ.գ.թ. դոցենտ, ՀՊՏՀ ֆինանսների ամբիոնի վարիչ

1990-1993 թթ.՝ ՀՀ էկոնոմիկայի նախարարի տեղակալ, 1993-1997 թթ.՝ ՀՀ ֆինանսների նախարար, 1997-1999 թթ.՝ ՀՀ արտակարգ և լիազոր դեսպան Կանադայում, 2001-2017 թթ.՝ «Ավագ Սոլյուշնս» ՍՊԸ, գլխավոր խորհրդական, 2012-2016 թթ.՝ ՀՀ ՊԵԿ նախագահի, ապա ՀՀ ֆինանսների նախարարի խորհրդական, 2016-2019 թթ.՝ ՀՀ ՊԵԿ Ուսումնական կենտրոնի տնօրեն:

Աշոտ Վարազդատի Մաթևոսյան

01.09.2001-ից մինչ այժմ՝ ՀՊՏՀ «Ֆինանսներ» ամբիոնի պրոֆեսոր, 01.03.1994՝ «Հայշինտրանս» արտադրական միավորում, տնտեսագետ, 20.03.1995-01.11.1996՝ «Հայէկոնոմբանկ» ԲԲԸ-ի Արարատի մասնաճյուղ, ավագ տնտեսագետ, վարկային բաժնի պետ, կառավարչի տեղակալ:

Էդգար Վահագնի Աղաբեկյան

LinkedIn հարթակում անձնական էջի **հղումը**

2009 թվականից մինչ օրս՝ «ԱՐՄԵՆԲՐՈԿ» ԲԲԸ ներդրումային ընկերություն, ֆինանսական խորհրդատու, ապա՝ գլխավոր դիլեր, 2006–2008 թթ.՝ «Պրիվատ ինվեստ» ՓԲԸ ներդրումային ընկերություն, սկզբում՝ ներքին վերահսկող, այնուհետև՝ արժեթղթերի վարչության պետ, հետագայում՝գործառնական բաժնի գլխավոր մասնագետ, հետո՝ պետ, 2005–2006 թթ.՝ «Հայէկոնոմբանկ» ԲԲԸ, արժեթղթերի դիլեր: 2007 թվականից մինչ օրս՝ ՀՊՏՀ, «Արժեթղթերի շուկա» (այժմ՝ «Ֆինանսներ») ամբիոնի ասիստենտ, ապա՝ դոցենտ:

ԴԱՍԱԽՈՍԱԿԱՆ ԿԱԶՄ

Սուրեն Հովհաննեսի Պողոսյան

LinkedIn հարթակում անձնական էջի **հղումը**

1985-1992 թթ.՝ ՀՀ ԳԱԱ տնտեսագիտության ինստիտուտ, ավագ տնտեսագետ, կրտսեր գիտաշխատող, գիտաշխատող, 1991-1992 թթ. ՀՀ նախագահին կից սոցիալ-տնտեսական հանձնաժողով, փորձագետ, 1993-2006 թթ.՝ ՀՀ ԳԱԱ տնտեսագիտության ինստիտուտ, ավագ գիտաշխատող, ներդրումային քաղաքականության թեմատիկ խմբի ղեկավար, բաժնի վարիչ: 2006 թվականից առ այսօր՝ ՀՊՏՀ ֆինանսական ֆակուլտետի «Արժեթղթերի շուկա», «Ֆինանսական շուկաներ և ինստիտուտներ», «Ֆինանսներ» ամբիոնի դոցենտ:

Մխիթար Ստեփանի Ասլանյան

LinkedIn հարթակում անձնական էջի **հղումը**

2000-2011 թթ.՝ «Աէրոբրոք» ՍՊԸ, ինվեստիցիոն բրոքերային ընկերության տնօրեն, 2006 թվականից մինչ օրս՝ «Լոմբարդսթրիթ» ՍՊԸ տնօրեն, 2021 թվականից մինչև օրս՝ «Գոհար Վարդանյան» բարեգործական հիմնադրամի տնօրեն

Վաչիկ Մելիքի Գևորգյան

LinkedIn հարթակում անձնական էջի **հղումը**

2008-2011 թթ.՝ «Արմսվիսբանկ» ՓԲԸ, վերլուծաբան, 2011-2013 թթ.՝ ՀՀ կենտրոնական բանկ, հետազոտող, 2013-2018 թթ.՝ Հայաստանի կենտրոնական դեպոզիտարիա, Դեպոզիտար ծառայությունների դեպարտամենտի ղեկավար, 2018-2020 թթ.՝ «Արարատբանկ» ԲԲԸ, Ներդրումային բանկային ծառայությունների դեպարտամենտի պետ, 2020 թվականից սկսած՝ «Բալչուգ Կապիտալ» ՓԲԸ, գործադիր տնօրենի տեղակալ:

Սևակ Սարմենի Միքայելյան

LinkedIn հարթակում անձնական էջի **հղումը**

ՀՀ ԿԲ Սպառողների շահերի պաշտպանության և ֆինանսական կրթման կենտրոնի պետի տեղակալ

ԳՈՐԾԸՆԿԵՐ-ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆՆԵՐ

CENTRAL BANK OF ARMENIA

AMX

Armbrok

Association of Eurasian Central Securities Depositories AECSD

ԱՇԽԱՏԱՆՔԱՅԻՆ ՀՆԱՐԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Որպես կրթական ծրագրի շրջանավարտի գործունեության բնագավառ կարող են լինել. պետական և համայնքների ֆինանսները, կազմակերպությունների (կորպորատիվ) ֆինանսները, արժեթղթերի շուկան, ֆինանսական ինստիտուտները (այդ թվում՝ բանկային և վարկային կազմակերպություններ, ապահովագրական ընկերություններ, ներդրումային և կենսաթոշակային ֆոնդեր), ֆինանսական շուկաների ենթակառուցվածքային համակարգերը (այդ թվում՝ ֆոնդային բորսա և առևտրային այլ համակարգեր, դեպոզիտարային և պահառուական այլ համակարգեր, քլիրինգային և վերջնահաշվարկային համակարգեր):

շրջանավարտներ

Շրջանավարտները կարող են զբաղեցնել ֆինանսական ոլորտին առնչվող տարբեր պաշտոններ և աշխատել

- Կառավարության համապատասխան նախարարություններում, գերատեսչություններում, կոմիտեներում
- Կենտրոնական բանկում,
- Առևտրային բանկերում,
- Վարկային կազմակերպություններում,
- Ապահովագրական ընկերություններում,
- Ներդրումային ընկերություններում,
- Ներդրումային և կենսաթոշակային ֆոնդերում,
- Ֆոնդային բորսայում,
- Կենտրոնական դեպոզիտարիայում,
- Առևտրային և ոչ առևտրային կազմակերպությունների ֆինանսական ստորաբաժանումներում և այլն:

Ողջույն, ես Անին եմ:

Գերազանցությամբ ավարտել եմ ՀՊՏՀ Ֆինանսական ֆակուլտետի «Արժեթղթերի շուկայի վերլուծություն և կառավարում» կրթական ծրագրի մագիստրատուրան: Վերլուծական ունակություններն ու տեսական գիտելիքները օգնեցին ինձ կողմնորոշվել իմ մասնագիտության ընտրության հարցում, իսկ արդեն մագիստրոսական 2 տարին ամրապնդեց գիտելիքներս:

Ուսումնառության ընթացքում մասնագիտական փորձառություններ եմ անցել Էկենգ ՓԲԸ-ում, ֆինանսական և հետազոտական վերլուծություններ եմ իրականացրել AAS Devel Software, Cognaize ՓԲԸ և IO Capital Investment Group կազմակերպություններում: **Ներկայումս աշխատում եմ Կոկա-Կոլա ընկերությունում՝ որպես Ֆինանսական վերլուծաբան:**

Ողջույն, ես Ժորան եմ:

Գերազանցությամբ ավարտել եմ ՀՊՏՀ Ֆինանսական ֆակուլտետի բակալավրիատը և «Արժեթղթերի շուկայի վերլուծություն և կառավարում» կրթական ծրագրի մագիստրատուրան: Արժեթղթերի ուսումնասիրությունը ինձ հնարավորություն է տվել ձեռք բերել ոչ միայն թեմային առնչվող հմտություններ, այլև զարգացրել է իմ վերլուծելու և հետազոտելու ունակությունները:

Մագիստրատուրայում սովորելը ինձ հնարավորությունների շարք է բացել, նախ ընդունվեցի ՀՀ Կենտրոնական բանկի սպառողների շահերի պաշտպանության և ֆինանսական կրթման կենտրոնում աշխատանքի, այնուհետև ճանաչվեցի ՀՀ կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարության մագիստրոսի կրթական ծրագրով «Լավագույն ուսանող» հանրապետական մրցույթի հասարակագիտության ոլորտի 3-րդ տեղի մրցանակակիր: **Ներկայումս աշխատում եմ ՀՊՏՀ Շարունակական կրթության բաժնում որպես գլխավոր մասնագետ:**

Ողջույն, ես Էլինան եմ:

Գերազանցությամբ ավարտել եմ ՀՊՏՀ ֆինանսական ֆակուլտետի բակալավրիատը, հաջորդիվ՝ նույն ֆակուլտետի մագիստրատուրան՝ «Արժեթղթերի շուկայի վերլուծություն և կառավարում» մասնագիտացմամբ:

Ուսումնառության ընթացքում ստացած տեսական և գործնական գիտելիքների շնորհիվ **այժմ հանդիսանում եմ ֆինանսական համակարգի մի մասնիկը՝ լինելով հայաստանյան առաջատար բանկերից մեկի՝ Արմսվիսբանկ ՓԲԸ-ի աշխատակից:**

Ողջույն, ես Վարդուհին եմ:

Ավարտել եմ ՀՊՏՀ ֆինանսական ֆակուլտետի «Արժեթղթերի շուկայի կառավարում և վերլուծություն» մասնագիտացմամբ առկա մագիստրատուրան: **Աշխատում եմ «Հայաստանի ֆոնդային բորսա» ԲԲԸ-ում՝ որպես Ցուցակման մասնագետ:** Մագիստրոսական ծրագրի շրջանակներում ամրապնդել և ձեռք եմ բերել նոր գիտելիքներ արժեթղթերի շուկայի վերլուծության, ակտիվների կառավարման, ինչպես ներդրումային ծառայությունների մատուցման վերաբերյալ:
Առանձնահատուկ կարևորում եմ ֆինանսական գործիքների և շուկաների ֆունդամենտալ և տեխնիկական վերլուծության և էկոնոմետրիկ մոդելավորման ասպարեզում ստացածս հիմնարար գիտելիքները: Կրթական ծրագիրը բավականին հագեցած էր և հատկանշական է այն փաստը, որ դասընթացը վարվում էր ոլորտում աշխատող և բավականին բանիմաց ու հմուտ մասնագետների կողմից:

Ողջու՛յն, ես Սոսեն եմ:

Բակալավրի և մագիստրոսի բարձրագույն որակավորումներս ստացել եմ ՀՊՏՀ-ում: 2022թ-ին գերազանցությամբ ավարտել եմ ֆինանսական ֆակուլտետի «Արժեթղթերի շուկայի կառավարում և վերլուծություն» մագիստրոսական կրթական ծրագիրը: **Այժմ աշխատում եմ «ԷԿԵՆԳ» ՓԲԸ-ում:** Համալսարանական կրթության 6 տարիների ընթացքում ստացած գիտելիքներս և ձեռքբերած հմտություններս ինձ թույլ են տալիս այսօրվա աշխատաշուկայում լինել մրցունակ և մարտահրավերների պատրաստ մասնագետ: